

ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԵՐԻՑՈՒԿԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս

Ն. Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Տնտեսագիտական գիտությունների թեկնածու,
ԷԿՈԳԼՈՐ ՄՊԸ նախագահ

Մարդը անհիշելի ժամանակներից, սկզբում տարերայնորեն, իսկ ավելի ուշ կյանքի փորձով և գիտակցաբար բույսերը օգտագործել է որպես դեղամիջոց: Աստիճանաբար զարգացել և ձևավորվել է բուսաբերապիսան: Հիպոկրատը նկարագրել է շուրջ 236 դեղաբույսեր: Ըստ նրա՝ բույսը թարմ վիճակում, առանց մշակումների, ավելի արդյունավետ է ներգործում օրգանիզմի վրա: Հայաստանում հանդիպում են շուրջ 3200 տեսակի բուսամուշներ, որոնք և բուսաբանական և բժշկական առումով մեծ նշանակություն ունեն: Քիմիայի զարգացման բուռն վերելքը նպաստեց սինթետիկ ճանապարհով նոր դեղանյութերի արտադրության ծավալների մեծացմանը: Այժմ էլ ստեղծվում են հազարավոր քիմիական դեղանյութեր: Չնայած դրան, սկսած 20-րդ դարի վերջին քառորդից մեծ ուշադրություն է դարձվում մշակովի և վայրի դեղաբույսերի օգտագործման վրա: Այս նյութը վերաբերում է Հայաստանում երիցուկ դեղաբույսի ուսումնասրությանը և մշակությունը կազմակերպելու աշխատանքներին:

Դեղատնային երիցուկի նկարագրությունը



Հայտնի են երիցուկի մոտ 70 տեսակներ, որոնք միամյա և բազմամյա խոտաբույսեր են: Դրանց մի մասը թունավոր է: Դեղատնային երիցուկը արժեքավոր և բազմակողմանիորեն օգտագործվող միամյա բույս է, պատկանում է աստղածաղկազգիների (Asteraceae) ընտատիքին: Ժողովուրդը դեղատնային երիցուկին (*Matricaria chamomilla*) անվանում է նաև օշոշ, հավածաղիկ, արգանդախոտ, խնծաղեղ, կոկոռճիկ, կուծուռի, լալապնդիկ (1):

Արմատային համակարգը առանցքային է, ցողունը մերկ, կանգուն, ուժեղ ճյուղավորվող, բարձրությունը՝ 30-50 սմ: Տերևները մեկական են, փետրածն կտրվածքով: Ծաղկափթույունը զամբյուղ է, որի եզրերին նստած են լեզվակավոր, սպիտակ գույնի չպտղաբերող ծաղիկներ:

Զամբյուղի մնացած մասը զբաղեցնում են խողովակաձև, երկսեռ և պտղաբերող ծաղիկները: Պտուղը մանր սերմիկ է:

Դեղատնային երիցուկը ծաղկում է ամռան ամիսներին՝ մինչև սեպտեմբերի կեսերը, որպես հումք օգտագործվում են նրա ծաղկած զամբյուղները: Ծաղկումը սկսվում է ծլումից 30-50 օր անց, 20-25°C-ում, որը ձգվում է մինչև ուշ աշուն:

Ծաղկած զամբյուղները հավաքում են ըստ հասունացման ժամկետների, 3-6 և ավելի անգամ: Բերքահավաքը կատարում են ձեռքով կամ հատուկ սանրիկներով: Հունքի չորացումը կատարում են բացօթյա ստվերում, տանիքներում կամ վառարաններում՝ 40°C -ից ոչ բարձր ջերմության պայմաններում: Թաց զանգվածը փռում են թղթի կամ գործվածքի վրա մինչև 5 սմ հաստությամբ: Չորացման ընթացքում խորհուրդ չի տրվում զամբյուղները շրջել կամ խառնել, քանի որ ծաղիկները կարող են թափվել և վատացնել հունքի որակը: Դեղատնային երիցուկի չոր հումքը ունի խիստ արտահայտված խնձորամեղրային բուրմունք, որով այն տարբերվում է վայրի և շատ տարածված մյուս տեսակներից:

Դեղատնային երիցուկի մշակությունը

Դրան տրամադրվող դաշտը նախապես պետք է պարարտացնել հասունացած գոմաղբով և անմիջապես վարել 20-25 սմ խորությամբ: Օրգանական պարարտանյութերի բացակայության դեպքում կարելի է պարարտացումը կատարել հանքային պարարտանյութերի չափավոր քանակներով: Ցանքից առաջ հողը փխրեցվում և հարթեցվում է: Ցանում են շատ սաղր, ընդամենը 0.5 սմ խորության վրա:

Սերմերը մանր են, ուստի հավասարաչափ ցանելը դժվար է, որի համար սերմնանյութը ցանքից առաջ խառնում են չոր տորֆահողի կամ ավազի հետ:

Դեղատնային երիցուկը լուսասեր է, ստվերոտ պայմաններում վատ է աճում և բերք չի տալիս: Տրտադիմացկուն է, գարնանային ցրտերից չի տուժում: Խոնավության նկատմամբ պահանջը չափավոր է, սակայն գարնանային ուշ ցանքերի և անջրդի պայմաններում կարող է նաև չժլել: Հողի նկատմամբ պահանջկոտ չէ, նախընտրելի են չեզոք ռեակցիայով ավազակավային հողերը և սևահողերը:

Ցանում են սովորական շարային կամ լայնաշար (40-60 սմ միջշարային) եղանակներով: Վերջինը կիրառվում է սերմ ստանալու համար: Դեղատնային երիցուկը մշակում են նաև տնամերձներում, թմբերի վրա, ճանապարհաեզրերին, բուսամաններում:

Գարնանը սերմերը ծլում են 5°C-ի պայմաններում: Ծլումից հետո, իսկական տերևներ առաջանալու փուլում կատարվում է բույսերի նոսրացում, իսկ վեգետացիայի ընթացքում՝ քաղիան-փխրեցումներ:

Հայաստանում դեղատնային երիցուկի մշակությամբ զբաղվողներ չկան: Մասնավորապես պարզված չէ նրա ցանքի ժամկետի, աճի և զարգացման, մշակության միջոցառումների և բերքատվության հարցերը: 2012 թվականին Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի պայմաններում ուսումնասիրվել են վերոնշյալ հարցերից մի քանիսը (աղյուսակ 1):

Դեղագործական երիցուկի աճի և զարգացման փուլերը, բերքատվությունը

Ցանքի ժամկետը	Ծլումը	3-4-րդ տերևի առաջացումը	Զամբյուղների առաջացումը	Ծաղկումը	Սերմերի հասունացումը	Բույսերի բարձրությունը	Ծաղկած զամբյուղների քերքը, գր/մ ²		Օդաչոր նյութերի ելք, %
							թաց	չոր	
08.06.12	13.06	28.06	15.07	19.07	29.07	40.8	767	231.0	30.1
18.06.12	27.06	19.07	01.08	04.08	16.08	31.7	450	129.0	28.7
28.06.12	07.07	25.07	15.08	19.08	-	-	-	-	-

Բերված տվյալներից երևում է, որ երիցուկի սերմերը հողում ծլում են 5-9 օրում: Ուշ ցանքի տարբերակներում ծլումը ձգձգվում է, որի պատճառը մեր կարծիքով հողի խոնավության աստիճանական նվազումն է: Ծլումից մինչև զամբյուղների առաջացումը տևում է 32-39 օր, իսկ զամբյուղների առաջացումից հետո բոլոր տարբերակներում բույսերը 3-4 օրում ծաղկում են: Սերմերի հասունացումը կատարվում է հուլիս-օգոստոս ամիսներին:

Մեր ուսումնասիրություններով պարզվել է, որ դեղատնային երիցուկի զարմանային ցանքը պետք է կատարել վաղ ժամկետում: Ուշացնելու դեպքում բույսերը ցածր են մնում, լավ չեն աճում, զամբյուղները քիչ և մանր են ստացվում, լավ չեն լցվում, որի պատճառով իջնում է ծաղկած զամբյուղների թաց և չոր կշիռը, օդաչոր նյութերի ելքը (աղյուսակ 1):

Դեղատնային երիցուկի քիմիական կազմը և բուժական առանձնահատկությունները

Երիցուկի ծաղկափթույթները պարունակում են ֆլավոնոիդներ, եթերայուղեր, տերպեններ, կումարին, վիտամին C, բազմաշաքարներ և օրգանական թթուներ: Երիցուկի յուղը խամազուլին կոչվող դառը բաղադրամաս է պարունակում, որը հակաբորբոքային, հակաալերգական և տեղացավազրկող հատկություն ունի:

Դեղատնային երիցուկը հաճախ օգտագործվում է որպես թեթևացնող, հանգստացնող, քրտնամուղ, լեղամուղ, ցավազրկող, փքահալած միջոց: Հայտնի է երիցուկի ծաղիկների, դաղձի տերևների, կատվախոտի արմատների, քենոնի և սամիթի պտուղների հավասար խառնուրդներով պատրաստված հանգստացնող թեյը: Այժմ լավ գործածություն է ստացել միայն երիցուկից պատրաստվող թեյը, որը խմում են մեղրով, շաքարով կամ օշարակով: Թեյը պատրաստում են չորացրած ծաղիկներից, մեկ լիտր ջրում եռացնում են 15 գրամ ծաղիկներ, այնուհետև դա թրմում են 15 րոպե: Այսպիսի թեյը խմում են քնից առաջ, որը հանգիստ և խորը քուն է ապահովում:

Բժշկության մեջ դեղատնային երիցուկի ծաղկազամբյուղները և մասամբ կանաչ զանգվածը, որը իր մեջ լորձային նյութեր է պարունակում, օգտագործվում է որպես հանգստացնող և բուժական միջոց: Նրա լորձը կարողանում է տարբեր բուժամիջոցներ նյութեր կլանել և դրանք հեռացնել աղեստամոքսային տրակտից: Բա-

ցի այդ, երիցուկի լորձը ծածկելով վնասված հյուսվածքները ապահովում է դրանց հանգստությունը գրգռիչներից, իջեցնում է ցավի զգացողությունը:

Երիցուկի թուրմով ողողում են բերանը, լվանում են վերքերը, կանխում են քորը, մաքրում են մաշկի բշտերը:

Բուժական նպատակով երիցուկի թուրմը օգտագործվում է նաև անասնաբուժության բնագավառում՝ որպես հակաբորբոքային, սպազմերը թեթևացնող, աղեստամոքսային տրակտը ախտահանող և փքումները թեթևացնող միջոց:

Ելնելով դեղատնային երիցուկի բուժական նշանակությունից և պահանջարկից, առաջարկվում է Գեղարքունիքի մարզում, տնամերձ հողակտորներում ներդնել դրա մշակությունը, ցանքը կատարել վաղ գարնանը, որի դեպքում ստացվում է մինչև 23.1 ց/հա ծաղկափթույնների չորացրած բերք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **L. Ս. Ղազարյան**, Բուսանունների հայերեն-լատիներեն, ռուսերեն-անգլերեն, ֆրանսերեն-գերմաներեն բառարան // Երևան, 1981:

2. Флора европейской части СССР // Отв. ред. Н. Н. Швецев. - Л.: Наука, 1994.

3. **Костина Л.** Лечение ромашкой // М: ООО "АСС-Центр", ООО "Авсонг", 2005.

4. **Рыжкова Н. П., Пикунов Е. Ю.** Лекарственные растения // Ростов-на-Дону: Феникс, 2006.

5. Энциклопедический словарь лекарственных растений и продуктов животного происхождения // Учев. Пособие, 2002.

ОСОБЕННОСТИ ВОЗДЕЛЫВАНИЯ АПТЕЧНОЙ РОМАШКИ

С. М. ГРИГОРЯН

Н. Э. ДАРБИНЯН

Ромашка аптечная - однолетнее травянистое растение, размножается семенами, имеет ценные лечебные свойства. Применяют ромашку как легкое слабительное, потогонное, желчегонное, болеутоляющее, противовоспалительное, мягчительное, ветрогонное средство при различных заболеваниях пищеварительного тракта. Ромашка аптечная в Армении очень редко встречается в диком виде и не выращивается. Выявлено, что в Гегаркуникском марзе имеются благоприятные условия для его выращивания. При этом рекомендуется ранний весенний посев, при котором получается 23.1 ц/га урожая сухих цветков.

PECULIARITIES OF CULTIVATION OF DOG'S CHAMOMILE

S. M. GRIGORYAN

M. E. DARBINYAN

Dog's chamomile is the one year plant, and is breedable with the seeds. It has very important therapeutic features and is used as a light laxative, sudorific, choleritic, pain releaver, antiinflammatory and for different illnesses of digestive tract. Dog's chamomile is a rare plant and in Armenia is growing in natural form only. We state that the Gegharkunik region has a good conditions for growing this plant in industrial conditions. We offer and advise the early sowing, which enables us to get up to 23,1 centner per hectare yield of dry flowers.